Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 29-ի N 1405 - Ն որոշման
Աղյուսակ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.14 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)	
		ոչ ֆինանսական ցուցանիշներ	ֆինանսական ցուցանիշներ
		տարի	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները 1. Քաղաքականության միջոցառումներ 1.2. Տրանսֆերտներ			
Ծրագրային դասիչը	Մատուցվող ծառայության անվանումը Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցում Նկարագրությունը Հայաստանի Հանրապետությունում կարկտահարության, ցրտահարության պատճառով տուժած բնակիչներին աջակցության տրամադրում		
1022 ԾՏ13			
Շահառուների քանակը	Մարզերի քանակը	9	
Գումարը (հազ. դրամ)		X	**492,961.5**
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը (անգամ)		1	
Շահառուների ընտրության չափանիշները ՀՀ մարզպետարանների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված հողօգտագործողներ Ծրագիրը (ծրագրերը) որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1022 Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր Վերջնական արդյունքի նկարագրությունը Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում, գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծում			

Աղյուսակ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

Բաժին 2. Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) ՀՀ 2018 թ. պետական բյուջե (հազ. դրամ)
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը/խումբը/դասը)		
1022			ԾՐԱԳԻՐ	
			Գյուղատնտեսության զարգացման խթանման ծրագիր	492,961.5
			Ծրագրի նկարագրությունը	
			Համայնքներում գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ, վերամշակմամբ և ագրոտուրիզմով զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի, այդ թվում՝ լիզինգի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը	
			Գյուղատնտեսական մթերքի և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի ծավալների ավելացում	
			Քաղաքականության միջոցառումներ. Տրանսֆերտներ	
	ԾՏ13		Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցում	492,961.5
			Տրանսֆերտի նկարագրությունը	
			Հայաստանի Հանրապետությունում կարկտահարության, ցրտահարության պատճառով տուժած բնակիչներին աջակցության տրամադրում	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 29-ի N 1405 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

NN ը/կ	ՀՀ մարզերը	Ընդամենը՝ վնասված տարածքը (հեկտար)	Ընդամենը՝ վնասի չափը (դրամ)	Ընդամենը՝ փոխ-հատուցվող գումարը (դրամ)	Որից՝	
					վնասի փոխհատուցման գումարը (դրամ)	«Հայփոստ» ՓԲԸ-ի ծառայության գումարը (դրամ)
1.	Արագածոտն	172.20	36,881,400	5,227,992	5,166,000	61,992
2.	Արարատ	295.90	632,449,100	31,853,882	31,476,168	377,714.0
3.	*Արմավիր	2,828.35	5,327,928,480	252,946,854	249,947,484.2	2,999,369.8
4.	Գեղարքունիք	667.34	188,351,980	17,727,443	17,517,236	210,206.8
5.	Լոռի	341.80	149,966,500	9,531,371	9,418,351	113,020.2
6.	Կոտայք	313.10	324,073,300	16,062,008	15,871,549	190,458.6
7.	Շիրակ	2,376.16	2,683,222,510	126,936,568	125,431,391	1,505,176.7
8.	Վայոց ձոր	253.284	190,599,060	9,595,690	9,481,907.5	113,782.9
9.	Տավուշ	707.80	322,921,200	23,079,668	22,805,996	273,672
Ընդամենը		7,955.934	9,856,393,530	492,961,476	487,116,083	5,845,393

*Հաշվարկներում ներառված է ՀՀ Արմավիրի մարզի Լեռնագոգի համայնքում ջրհեղեղի պատճառով սատկած 600 հատ ճտի վնասի չափը, որը կազմում է 240 հազ. դրամ (600 հատ x 400 դրամ), փոխհատուցման գումարը կազմում է 72 հազ. դրամ՝ վնասի 30 տոկոսի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 29-ի N 1405 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մեղմման նպատակով գյուղատնտեսական հողօգտագործողներին մասնակի փոխհատուցման տրամադրման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

II. ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Գյուղատնտեսական հողօգտագործողներին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցումը տրամադրվում է 50-100 տոկոսով տուժած հողօգտագործողներին:

3. Փոխհատուցման սահմանաչափերը սահմանվում են հետևյալ չափով՝

1) խաղողի համար՝ վնասի 5 տոկոսի չափով.

2) պտղի և հատապտղի համար՝ վնասի 5 տոկոսի չափով.

3) բանջար-բոստանի, կարտոֆիլի, կերային և տեխնիկական մշակաբույսերի համար՝ վնասի 4 տոկոսի չափով.

4) հացահատիկի և հատիկաընդեղենի 1 հեկտարի համար՝ 30000 դրամ:

4. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ կազմում են տարերային աղետների հետևանքով տուժած հողօգտագործողների ցանկը (նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, հողատարածքի վայրը, չափը, պատճառված վնասի և փոխհատուցվող գումարի չափը), որից հետո մարզպետարանների

կողմից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 5-ը այն տրամադրվում է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ փոխհատուցման վճարումները կատարելու նպատակով:

5. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները տարերային աղետների հետևանքով տուժած հողօգտագործողների ցանկը կազմելիս հաշվարկներում հիմք են ընդունում սույն կարգի 3-րդ կետով նախատեսված սահմանաչափերը:

6. «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 24-ը չվճարված գումարները մինչև 2018 թվականի դեկտեմբերի 25-ը ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

7. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կողմից մինչև 2019 թվականի փետրվարի 10-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվում տեղեկատվություն՝ հանրապետության հողօգտագործողներին տարերային աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցված գումարների վճարման վերաբերյալ:

8. Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմիններն ապահովում են փոխհատուցման գումարների տրամադրման կարգի և դրա իրականացման գործընթացների հանրային իրազեկումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ